Տ. ԳՅՈՒՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱԳԱՇՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՅՑՎԱԾ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(2 նոյեմբերի 2003 թ.)

«Մեծաւ փառօք եւ բազմութեամբ
զօրացդ լուսեղիւաց իջեր ի յերկնից ի դաշտն Արարատեան
ի յայցելութիւն փոքու հօտիդ Քոյ ազգիս հայոց,
եւ ի ցուցումն յաւրկականի սիրոյդ եւ մեծի ողորմութեանդ:
Եւ ոսկէ ուռամբ բաղխեցեր զիսորս անդնդոց
եւ հալածեցեր զգունդս սանդարամետականաց,
ուր եւ լուսաձեւ յօրինմամբ հրաշագործեցեր
զՄայր Աթոռն մեր զՍուրբ Էջմիածին»:

(Ժամամուտ Սրբոյ Էջմիածնի)

«Ցանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Այսօր, սիրելիներ, այս սրբության սեղանին առաջ, տեղվոջ փառաբանության, Թաբոր լերին Հայաստանյայց կուգանք անգամ մը ևս Վեհափառ Հայրապետի օրհնությամբ ծունկի գալ և մեր ուխտը նորոգել Աստուծո այնպես, ինչպես երբ կանչվեցանք ծառայության Եկեղեցվո, ամենքս ալ, Սուրբ Հոգվույն շնորհքներով զորացած, առաքվեցանք ծառայության Եկեղեցվո: Տարինք ամենքս ալ Ավետարանն իր ամբողջ բովանդակությամբ գործնապես ապրելու, ողջունելու ամենքը՝ Եկեղեցվո բոլոր զավակները անպայմանավոր ծառայությամբ, սիրով և առանց գայթակղության:

Ամենքս ալ այսօր կիրավիրվինք Հայրապետի օրհնությամբ ծունկի գալ և Հայաստանյայց Եկեղեցվո Թաբոր լերան վրա աղոթքով հաղորդության մեջ մտնել մեր բոլոր հայրերուն, որոնք մանավանդ 1700 տարիներ առաջ այս Տաճարի օրհնության մասնակցեցան և մեզի տվին քաջությունն իրենց հետևելու: Նշանեցավ այսօր, առ մեզ «լոյս երեսաց Քոց եւ եկուր ուրախութիւն սրտից մերոց»:

Ով Տեր, Դուն այսօր զորացուցիր մեզ կրկին անգամ ծառայության նորոգության ուխտը կատարելու և այդ ուխտով մանավանդ տանելու մխիթարությունը մեր ժողովուրդի զավակներուն, Ավետարանը, որուն կյանքը վստահվեցավ այս Մայր Տաճարին՝ տարածելու ամենուն համար սեր և եղբայրական օգնություն: Առաքյալը մեզ ցույց տվավ առաջնորդության ծառայական ոգին: Ամենքս ալ առանց այլայլության, զորացած իր օրինակով եկանք սպասավորության Եկեղեցվո: «Ժողովեալքս ի հարկի սրբութեան եւ ի տեղւոջս փառաբանութեան» այսօր ամենքս ալ կուգանք լսել Աստուծո հարցը:

Սիրելիներ, փորձեցեք ձեր անձերը, քննեցեք զանոնք, թե արդյոք կմնա՞ք հավատարիմ այն ծառայության ուխտին, որ այսօր պետք է գործել:

Սիրելիներ, աղոթք և օրհնություն ամենուն, որ մեզի ձայնակից եղան ամբողջ Եկեղեցվո միությամբ սիրտ ի սիրտ և ձեռն ի ձեռ ծառայելու ամենուն, կաթիլ մը մխիթարություն բերելու սրտերուն մեր եղբայրներուն և քույրերուն: Այսօր ձեր զավակները և եղբայրները եկած են այս Տաճարին մեջ, որպեսզի հետևին Հայրապետի հնչեցրած ավետարանական կոչին: Եմնանք հավատարիմ մեր ծառայության, ունկնդիր ըլլանք անոնց առաջնորդության և, իրենց օրինակին հետևելով, ողջունել տեսանելի ապրող օրինակը կյանքին: Բոլորս ալ երեկ և առջի օր մանավանդ վկայեցինք 1700-ամյա կյանքին շունչը իրագործված և ապահովված մեր Եկեղեցվո առաջին սպասավորին՝ Ամենայն Հայոց Հայրապետի օրինակով, որուն հետևելու մեր ուխտն այսօր կվերանորոգենք՝ Նորին Սրբությանը մաղթելով, որպեսզի հավիտյան ինքը մնա առաջնորդն ամենուս՝ տանելու իրարու սերը և եղբայրական ոգին ի շինություն և ի մխիթարություն մեր Հայաստանյայց Եկեղեցվո:

Լույս ծագեցավ 1700 տարիներ առաջ այս Մայր Տաճարին մեջ վերստին օրհնությամբը Ս. Լուսավորչի, և վերհիշելով այդ օրը, այսօր, իմ աղոթքը կբարձրացնեմ և կմատուցանեմ իմ հարգալիր ողջույնը Ամենայն Հայոց Հայրապետին՝ Եսայի մարգարեի հետևողությամբ ըսելով. «Լուսաւորեայ, լուսաւորեայ Էջմիածին, զի հասեալ է լոյս քո եւ փառք Տեառն ի վերայ քո ծագեցին»:

Ուխտի այս օրվան առիթով կաղոթենք առ Աստված, որ Մայր Աթոռը շարունակե երկար-երկար տարիներ ծաղկիլ և փառավորիլ իր առաքելության ճամփուն, հատկապես եկեղեցական դասուն զորացումով և մեր բոլորիս ալ եկեղեցաշնորհ սպասավորությամբ: Լույսը տարածված է և հասցված է մեզի առաջնորդությամբը Հայրապետին, որպեսզի մեր Եկեղեցին ընդ երկայն ավուրս շարունակե իր առաքելությունը:

Այսօր ուխտի օր է, աղոթքի և վերանորոգման հարցումի: Ես անձնապես, ձայնակցելով իմ հոգևոր եղբայրներուն և ժողովուրդին, կհայցեմ Աստուծմե, որպեսզի զորացնե մեզ հավիտյան, որպեսզի Իր փառքը հաղթահարե երկրի բոլոր փորձություններուն և մեր հավատքով զորացած ընթանանք հավիտյան՝ մեր հավատքը չզիջելով որևէ մեկ նոր երևույթներուն: Աղոթք և օրհնություն բոլոր անոնց, որոնք գործեցին և աշակերտիմք և հետևիմք առաքելոց կյանքին, ամեն: